ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏ ԴՊԻՐ ՋՈՒՂԱՅԵՑԻ

(1620?–1691?)

Ժէ. Դարու հայ մշակոյթի բազմավաստակ գործիչներէն մին է Հայրապետ Դպիր։ Ծնած է մօտաւորապէս 1620 թուին։ Ամուսնացած էր Անանոյի հետ և ունէր երկու որդիներ՝ Աղաջան և Սարգիս (1661)։ Ունեցած է նաև աշակերտներ, ինչպէս Նահապետ և Յակոբ (1655)։

Իր գործունէութիւնը կը տարածուի աւելի քան կէս դար տևող ժամանակամիջոցի մը վրայ (1639–1691)։

Հայրապետ Դպիր աշխատած է Նոր Ջուղայի մէջ, առաւելապէս իբրև ծաղկող քան գրիչ։ Իր գործերուն թիւը երեք տասնեակէն աւելի է։

Ստորև կը ներկայացնենք իր աշխատանքը, ըստ կարելւոյն ժամանակագրական կարգով։

1. — Աւետարան մը, գրուած 1418ին, նորոգուած է 1639ին, Բաղդասար Վրդ. Ջուղայեցիի կողմէ. այդ առթիւ Հայրապետ նկարիչ կատարած է ծաղկումը. — Ձեռ. Երևանի, թիւ 7224։

2. — Քարոզգիրք, 1641ին գրուած Բաղդասար Վարդապետի և Անտոն Դպրի ձեռքով։ Նկարող՝ Յոհան Քահանայ։ Ծաղկող՝ Հայրապետ Դպիր։ Ստացող՝ Բաղդասար Վրդ. — Ձեռ. Վիեննայի, թ. 1208։

3. — 1642, Մեկնութիւն Մատթէի և Յովհաննու՝ Գր. Տաթևացիի։ Գրիչ՝ Անտոն Ջուղայեցի և Մարգարէ։ Ծաղկող՝ Հայրապետ, Ստացող՝ Պաղտասար Վարդապետ. — Ձեռ. Երևանի, թ. 1260։

4. — 1642–1645, Աստուածաշունչ։ Գրիչ՝ Աստուածատուր Դպիր։ Նկարիչ՝ Հայրապետ Դպիր։ Ստացող՝ Զօնրապ Երևանցի. — Ձեռ. Ս. Յ. թիւ 1933։

5. — 1643–1646, Աստուածաշունչ։ Գրիչ՝ Ստեփանոս, որդի Մարտիրոսի։ Ուղղիչ՝ Գրիգոր Քահանայ։ Ծաղկող՝ Հայրապետ, ըստ երևոյթին։ Ստացող՝ Սաֆար Ամիրասաթենց. — Ձեռ. Ս. Յ., թ. 1934։

6. — Խորհրդատետր, 1647։ Գրիչ՝ Աստուածատուր։ Ծաղկող՝ Հայրապետ Ջու-

---

ՀՈԳԻՍ ՊԱՐՍՊԵԱՆ

Տէ՞ր թէ բախտն, չեմ գիտեր, ու չեմ փորձեր իսկ գիտնալ,
Անցգրօրէն, ուժգնօրէն խարազանեց իմ հոգին.
Այդ հարուածէն դեռ երբեմն կ'արիւնի տեղը վէրքին,
Թէեւ վարդ մը կը ճգնի հոն իր թերթերը բանալ...:

Վարդ մը կարմիր, համագոյն վէրքին վրայ, վէրքին մօտ,
Ի՞նչ կախարդիչ բայց նաեւ ի՞նչ տարտուչ ալ պատկեր.
Կը սպիանայ վէրքը բայց, կը կորցընէ վարդն իր հոտ.
Վիշտն այդ բազմած տրէտ նեռ իցի՞ւ մնար անընկեր...:

Ա՛լ ասկէ ետ ամէն հեղ երբ արիւնել գան հոգիս,
Բախտին նայուածքն ալ ու ծուռ՝ երբ գայ իյնալ իմ վրան,
Վէրքը այդ թաց ու անբոյժ կ'ընեմ ինծի ես վահան:

Ա՛լ ի՞նչ ձեւով կեանքն արդեօք պիտի փորձէ ընկնել զիս,
Քանի վիշտին դէմ վիշտով պարսպած եմ իմ հոգին.
Փաստը ամէն չարիէ հասակ առնող բարիքն:

1981 Գ. ՃԱՐՏԱՐ

digitised by A.R.A.R.@

ղայեցի։ Ստացող՝ Օնափրիոս կրօնաւոր։ — Ձեռ. Երեւանի, թ. 389։

7. — 1648, Աստուածաշունչ։ Գրիչ՝ Ղազա՞ր։ Ծաղկող՝ Հայրապետ։ Ստացող՝ Խօջայ Պետրոս։ — Ձեռ. Երեւանի, թ. 2587։

8. — 1648, Աստուածաշունչ։ Գրիչք՝ Գասպար Երէց և Յովհաննէս։ Ծաղկող՝ Հայրապետ։ — Ձեռ. Վենետիկի, թիւ 3, ըստ Սարգիսեան Ցուցակի։

9. — 1649, Աստուածաշունչ։ Գրիչք՝ Գասպար Երէց և Յովսէփ Դպիր։ Ծաղկող՝ Հէրապետ։ Ստացող՝ Խօջայ Նազարէթ։ — Ձեռ. Երեւանի, թ. 189։

10. — 1651–165?, Աւետարան։ Գրիչ՝ Վահրամ Դպիր։ Ծաղկող՝ Հայրապե՞տ։ Ստացող՝ Առաքել (Ամիրխան)։ — Ձեռ. Երեւանի, թ. 237։

11. — 1653ին ժողովածոյի մը ծաղկումը լրացուցած է։ — Ձեռ. Երեւանի, թ. 1742։

12. — Ծ. 1655, Յայսմաւուրք։ Գրիչք՝ Մկրտում և Մալին։ Ծաղկող՝ Հայրապետ։ Ստացող՝ Պետրոս, որդի Մարգարի։ — Ձեռ. Նոր Ջուղայի, թ. 261։

13. — 1655, Աւետարան։ Գրիչ՝ Յակոբ Դպիր։ Ծաղկող՝ Հայրապետ։ Ծաղկումին համար Ծաղիկ Խաթուն վճարած է 10 ոսկի։ Ստացող՝ Գրիգոր Քհն. Խօշապեցի։ — Ձեռ. Chester Beatty Library, թ. 578։

14. — 1656, Մաշտոց։ Գրիչք՝ Աղամալ և Յոհան Տաթեւացի։ Ծաղկող՝ Հայրապետ։ Ստացող՝ Խօճասար։ — Ձեռ. Երեւանի, թ. 953։

15. — 1656, Աւետարան։ Գրիչ՝ Գասպար Երէց։ Ծաղկող՝ Հայրապետ վարդապետ։ Ստացող՝ Խօջայմալ։ — Ձեռ. Երեւանի, թ. 2399։

16. — 1659–1660, Աւետարան։ Գրիչ՝ Յովհաննէս։ Ծաղկող՝ Հայրապետ։ Ստացող՝ Խօջայ Ռուստամ, Յովհաննէս Վարդապետ։ — Ձեռ. Երեւանի, թ. 254։

17. — 1660, Աստուածաշունչ։ Գրիչ՝ Աստուածատուր Քահանայ։ Ծաղկող՝ Հայրապետ, վարդապետաց վարդապետ։ Ստացող՝ Զաքարիա Վարդապետ։ — Ձեռ. Երեւանի, թ. 201։

18. — 1661, Յայսմաւուրք։ Գրիչ՝ Մարկոս Քահանայ։ Ծաղկող՝ Հայրապետ։ Ստացող՝ Եղիկ մահդասի, որդի Յովաննէսի։ — Ձեռ. Նոր Ջուղայի, թ. 250։

19. — 1662, Քարոզգիրք, Բարթուղիմէոս Մարաղացիի։ Գրիչ՝ Ուռուստակէս։ Ծաղկող՝ Հայրապետ։ Ստացող՝ Պարոն Վաթան։ — Ձեռ. Երեւանի, թ 2183։

20. — 1664, Ժողովածու։ Գրիչք՝ Հէրապետ Ջուղայեցի և Յովանէս Քահանայ։ — Ձեռ. Երեւանի, թ. 83։

21. — 1667, Ճաշոց։ Գրիչ և Ստացող՝ Հերապետ։ — Ձեռ. Երեւանի, թ. 4502։

22. — 1669ին լրացած մէկ Աւետարան։ Գրիչք՝ Յակոբ և Կիրակոս Քահանայ։ Ծաղկող՝ Հայրապե՞տ։ Կազմող՝ Սարգիս Վանեցի։ Ստացող՝ Դաւիթ (1670)։ — Ձեռ. Երեւանի, թ. 6783։

23. — 1670, Աւետարան։ Գրիչք՝ Աստուածատուր և որդին Մկրտիչ։ Ծաղկող՝ Հայրապետ։ — Ձեռ. Վասպուրականի, Ցուցակ Ե. Լալայեանի, էջ 933։

24. — 1675, Ժողովածու։ Գրիչք՝ Մարկոս և Հայրապետ։ — Ձեռ. Երեւանի, թ. 1889։

25. — 1677, Աւետարան։ Գրիչ՝ Մկրտում։ Ծաղկող՝ Հայրապետ։ — Ձեռ. Երեւանի, թ. 7237։

26. — 1678, Աւետարան։ Գրիչ՝ Հէրապետ։ — Ձեռ. Պերլինի Արք. Մատենադարանին, Ն. Քարամեանց, թ. 18։

27. — 1679, Խորհրդատետր։ Գրիչ և Ծաղկող՝ Հայրապետ։ Ստացող՝ Աղէքսանդր Վարդապետ։ — Ձեռ. Երեւանի, թ. 2673։

28. — 1680, Աւետարան։ Գրիչ՝ Ամիր Սարգիս Դպիր։ Ծաղկող՝ Հայրապետ։ — Ձեռ. Երեւանի, թ. 6782։

29. — 1684, Աւետարան։ Գրիչք՝ տէր Արիստակէս և Յովհաննէս Քահանայ։ Ծաղկող՝ Հայրապետ վարդապետ։ Կազմող՝ Ազարիա վարդապետ։ Ստացող՝ Բունիաթ մահտեսի։ — Ձեռ. Երեւանի, թ. 6774։

30. — 1686–1687, Ճաշոց (Ա. Բ.)։ Գրիչ՝ Արիստակէս Քահանայ։ Սրբագրող՝ Աղէքսանդր Քարեպիսկոպոս։ Ծաղկող՝ Հայրապետ։ Պատուիրատու՝ Մամ, կողակից Խօջա Խաչիկի։ — Ձեռ. Նոր Ջուղայի, թ. 142, 143, Ցուցակ Բ. Հատոր։

31. — 1687, Խորհրդատետր։ Գրիչ և Ծաղկող՝ Հայրապետ։ Ստացող՝ Մարտիրո՞ս Վարդապետ։ — Ձեռ. Նոր Ջուղայի, թ. 316։

digitised by A.R.A.R.@

ՆՈՐ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒՆԵՐ ԵՒՐՈՊԱՅԻ ՆՈՐԱԿԱԶՄ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒՆ

Համագոյքի տարածքին մեր ցրուածութեան իրրեւ անխուսափելի հետեւանք եւ քաղաքական ու տնտեսական պայմաններու բերումով, վերջին տասնամեակներուն, Սփիւռքի մեր կարգ մը գաղութները նօսրացան եւ գրեթէ անհետացան, մինչ այլ երկիրներու գաղութներ հոծացան եւ բարգաւաճեցան: Կազմուեցան նաեւ հայկական բջիջներ այնպիսի երկիրներու մէջ՝ ուր հազիւ մատի վրայ համրուած հայեր գոյութիւն ունէին 50ական թուականներուն: Առաջիններէն կը յիշենք Պիրմանիոյ (Ինտոնէզիա), Հնդկաստանի եւ Եթովպիոյ գաղութները, վերջիններէն՝ Վէնէզուէլայի, եւ մանաւանդ Եւրոպական ցամաքամասի վրայ, Արեւմտեան Գերմանիոյ, Զուիցերիոյ, Հոլանտայի եւ Սքանտինաւեան երկիրներու — մասնաւորաբար Շուէտի — հայ գաղութները:

Մատակարարելու համար հոգեւոր կարիքները այս վերջիններուն, բոլորին աչքերը Ս. Էջմիածնի հետ ու աւելի՝ պիտի ուղղուէին բնականաբար Երուսաղէմի Սուրբ Աթոռին: Արդարեւ, անցնող աշնան, Հոլանտահայ գաղութը ունեցաւ իր առաջին Հովիւը, յանձինս Ս. Ուխտիս Երիտասարդ Միաբաններէն Հոգշ. Տ. Նուրհան Վրդ. Մանուկեանի: Գրեթէ նոյն ատեն, դարձեալ Ս. Ուխտիս Միաբան Հոգշ. Տ. Վիգէն Վրդ. Այքազեանը, յաջողութեամբ աւարտելէ ետք Լոնտոնի Քինկզ Քոլէճի աստուածաբանական ընթացքը, կը մեկնէր ժընեւ, ստանձնելու համար հոգեւոր հովուութիւնը Զուիցերիահայ փոքրաթիւ գաղութին: Իսկ Մայիսի 20ին, Սուրբ Աթոռէս դէպի Սթոքհոլմ ճամբայ կ'ելլէր Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեանը, իբրեւ հոգեւոր հովիւը Շուէտահայութեան մասնաւորաբար եւ Սքանտինաւիոյ այլ երկիրներուն (Նորվեկիա, Ֆինլանտա, Տանիմարքա) ընդհանրապէս:

Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. մէկն է Ս. Ուխտիս զարգացած Միաբաններէն, որ առիթը ունեցած է հետեւելու Սորպոնի համալսարանի (Փարիզ) լեզուաբանական ճիւղին եւ հմտանալու քանի մը լեզուներու: Երկար տարիներ հովուած է Ամմանի գաղութը: Հեղինակն է «Համմուրապիի Օրինագիրքը» եւ «Հրաչեայ Աճառեան եւ իր "Լիակատար Բերականութիւն"ը» ուսումնասիրութիւններուն եւ ծեռնարկած է թարգմանութեանը պատմա-բանասիրական մեծ արժէք ունեցող Գիլգամէշի Դիւցազներգութեան:

Վստահ ենք որ Հայր Անուշաւան արդիւնաւորապէս պիտի վարէ իրեն վստահուած նոր այս պաշտօնը: Ան խոստացած է պարբերաբար «Սիոն»ի ղրկել շահեկան եւ մանրամասն տեղեկութիւններ՝ Սքանտինաւիոյ նորակազմ գաղութներու կեանքին շուրջ:

---

32. — 1687, *Խարհրդատետր։ Գրիչ՝ Հայրապետ. — Ձեռ. Ս. Ց., թիւ 1852։*

33. — 1688, *Աւետարան։ Գրիչ՝ տէր Արիստակէս։ Մաղկոց՝ Հայրապետ. — Ձեռ. Վենետիկի, թիւ 117, ըստ Մարգիսեան Ցուցակի։*

34. — 1691ից առաջ, *Աւետարան։ Գրիչ՝ Աստուածատուր։ Մաղկոց՝ Հայրապետ. — Ձեռ. Երեւանի, թ. 6765։*

35. — 1691, *Աւետարան։ Գրիչ՝ Կիրակոս Երէց։ Մաղկոց՝ Հայրապետ։ Ստացող՝ Ղազար Թաւրիզեցի. — Ձեռ. Երեւանի, թիւ 247։*

Ն. ԱՐՔ. ԽՈՎԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@